



ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի
2026-2027 ուսումնական տարվա ընդունելություն

1. Ընդունելությունը կազմակերպել մրցույթի միջոցով 7-րդ, 8-րդ և 10-րդ դասարանների համար:
2. Մաթեմատիկա առարկայի քննությունը 7-րդ և 8-րդ դասարաններում կազմակերպել մեկ փուլով:
7-րդ դասարան՝ հունիսի 19-ին՝ ժամը 13:00-ին,
8-րդ դասարան՝ հունիսի 19-ին՝ ժամը 9:00-ին:
3. Տարբերակները պարունակում են՝ 7-րդ դասարանում 16, իսկ 8-րդ դասարանում 20 խնդիր-վարժություններ, որոնց լուծման համար տրվում է 150 րոպե: Դիմորդը աշխատանքն ավարտելուց հետո հանձնում է ձևաթուղթը, ստանում ձևաթղթի լուսապատճենը, որից հետո դուրս է գալիս քննասենյակից: Հանձնաժողովը ստուգում է միայն ձևաթուղթը:
4. Դիմորդը քննության է ներկայանում միայն կապույտ գույնի գրիչով:
5. Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:
6. 7-րդ և 8-րդ դասարանների քննությունների ժամանակ միկրոհաշվիչից օգտվել չի թույլատրվում:
7. Դիմորդները պետք է ներկայանան քննական թերթիկներով՝ նշված ժամին. ուշացումով ներկայացած դիմորդը զրկվում է քննությանը մասնակցելու իրավունքից:
8. Նախնական ցուցում-բացատրություններ տալուց, յուրաքանչյուր աշակերտին մեկ տարբերակ բաժանելուց հետո հայտարարվում է քննության սկիզբը:
9. Քննասենյակներում հսկողությունն իրականացնում են տնօրենի հրամանով նշանակված կազմակերպիչները:
10. Դպրոց ընդունվում են ավելի բարձր միավորներ հավաքած դիմորդները: Հավասար միավորների դեպքում առավելություն կտրվի ըստ նշված առաջնահերթությունների՝
 - ա) 2025-2026 ուստարում մաթեմատիկա կամ ֆիզիկա առարկաների հանրապետական փուլի դիպլոմակիր,
 - բ) 2025-2026 ուստարում մաթեմատիկա առարկայի «Պատանի մաթեմատիկոս» մրցույթի դիպլոմակիր,
 - գ) 2025-2026 ուստարում մաթեմատիկա, ֆիզիկա կամ ինֆորմատիկա առարկայի մարզային օլիմպիադայի դիպլոմակիր,
 - դ) 2025-2026 ուստարում որևէ առարկայից հանրապետական փուլի դիպլոմակիր,
 - ե) Երևանից դուրս որևէ դպրոցի դիմորդ,
 - զ) 2025-2026 ուստարում որևէ առարկայից մարզային փուլի դիպլոմակիր,
 - է) ավելի բարձր առաջադիմություն,

- ը) վերը նշված յոթ կետերի հավասարության դեպքում կանցկացվի լրացուցիչ հարցազրույց:
11. Երևանից դուրս մարզերի դպրոցներում սովորող դիմորդներին կտրվի առավելություն՝ յուրաքանչյուր դիմորդի հավաքած միավորին ավելացնելով մեկ միավոր (10-րդ դասարանի դեպքում՝ 2 առարկաների գումարային միավորին կավելացվի մեկ միավոր):
 12. 10-րդ դասարանի քննություններն անցկացվում են՝
հունիսի 22-ին՝ ժամը 9⁰⁰-ին- ֆիզիկա, տևողությունը 150 րոպե,
հունիսի 25-ին՝ ժամը 9⁰⁰-ին- մաթեմատիկա, տևողությունը 150 րոպե:
 13. Ֆիզիկայի քննության ժամանակ անհրաժեշտ է ունենալ միկրոհաշվիչ:
 14. 10-րդ դասարանի ֆիզիկա առարկայից 8 և ավել միավոր հավաքած դիմորդները կմասնակցեն մաթեմատիկայի քննությանը, իսկ մրցույթին կմասնակցեն մաթեմատիկայի քննությունից 8 և ավելի միավոր հավաքած դիմորդները:
 15. Արդյունքների հրապարակում.
7-րդ դասարան՝ հունիսի 20-ին՝ ժամը 19:00-ին,
8-րդ դասարան՝ հունիսի 20-ին՝ ժամը 19:00-ին,
10-րդ դասարան՝ ֆիզիկա հունիսի 23-ին՝ ժամը 19:00-ին,
10-րդ դասարան՝ մաթեմատիկա հունիսի 26-ին՝ ժամը 19:00-ին:
 16. Արդյունքների բողոքարկումներ.
7-րդ դասարան՝ հունիսի 22-ին՝ ժամը 13:00-14:00,
8-րդ դասարան՝ հունիսի 22-ին՝ ժամը 14:00-15:00,
10-րդ դասարան՝ ֆիզիկա հունիսի 24-ին՝ ժամը 13:00-15:00,
10-րդ դասարան՝ մաթեմատիկա հունիսի 28-ին՝ ժամը 13:00-15:00:
 17. 7-րդ և 8-րդ դասարանների բողոքարկումը կատարվում է միայն տեխնիկական վրիպումները բացառելու համար:
 18. 10-րդ դասարան ընդունվում են երկու քննություններից գումարային ավելի բարձր միավոր հավաքած դիմորդները:
 19. 2026թ. հունիսի 6-ին կազմակերպվող հարցազրույցով ֆիզմաթ դպրոցի համապատասխան դասարան կարող են ընդունվել՝
 - ա) 2025-2026 ուստարում մաթեմատիկա կամ ֆիզիկա առարկաների օլիմպիադաների հանրապետական փուլի դիպլոմակիրները,
 - բ) 2025-2026 ուստարում մարզային օլիմպիադայի և «Պատանի մաթեմատիկոս» միցույթի դիպլոմակիրները,
 - գ) 2025-2026 ուստարում «Կորիզ- մաթեմատիկա» մրցույթի 6-ից 11-րդ դասարանների հաղթողները:
 20. Արդյունքները կտեղադրվեն physmath.am կայքում:

Աշխատակարգը հաստատվել է 2026թ. մայիսի 7-ին կայացած մանկավարժական խորհրդի նիստում: